

374. Գոն առաջին անգամ գրուած կը տեսնենք ժԲ դարուն. բայց անըշտ շատ աւելի Տին է այս մասերկը քան այն դարը, վասն զի Խօսք մը, բառ մը կամ դարձուածք մը գորդին գրչին սակ անցնելէ առաջ երկար ժամանակ կը ծեծուի ժողովրդին բերնին մէջ:

375. Անժխտելի կերպով կարելի է պնդել թէ այդ ինչ մասերկը ձեւացած է անցնելով ձայնական փոփոխութիւններէ՝ նախկին ինչ — ձեւէն. ինչ —, ինչ —, ինչ —, ինչ — (Տես գործիս Բ Մասին մէջ —) երկարաբառը եւ — ձայնաւորը):

3. Ստորադասական:

376. Բարբառիս մէջ Ստորադասականը Սահմանականէն, ուստի եւ երկբայականէն կը զայնազանի ձև՝ յետագաս մասերկով. օր. խի՛մ ձև՝, տեսա՛յ ձև՝, առնա՛մ ձև՝ եւն, զորս կարելի է թարգմանել, թէ՛ խմեմ, թէ՛ որ տեսնէի, առնելու որ ըլլամ, եւն:

377. Այս եղանակիս թէ՛ ներկան եւ թէ՛ անկատարը կը խնարհին Սահմանականի ժամանակներուն նման, միայն փոխանակ ձևի ձև՝ կ'առնուն եւ սկզբնական ՚ կ'երբեք չեն առնուր՝ նոյն իսկ եթէ ձայնաւորով ալ սկսին:

378. Սոյն ձև՝ մասերկս ալ միջին դարերու ձև կամ ձայն շաղկապէն առաջ եկած է անտարակոյս: Չայնական օրինաց Տանժամառ ձայն եղած է նի (որ զեւ շատ մը գաւառաբարբառներու մէջ գործածական է) եւ ասկէ՝ ըստ բարբառիս ձայնագիտութեան՝ (տես ն ձայնաւորը Գործիս Բ. Մասին մէջ) վերածուած է ձև՝ ձեւին, ճիշդ ինչպէս որ ձև վերջաւորող բայերու Սահմ. ներկ. եզ. 3. դէմքի նախկին ձեւ եղած է — նոյն այս բարբառիս մէջ:

4. Ըղծական:

379. Ըղծական եղանակը որ բարբառիս մէջ շատ գործածական է, գործողութեան մէջ փափաք մը կը դնէ:

380. Եղանակս սահմանականէն, երկբայականէն եւ ստորադասականէն կը զանազանուի նախագաս լուր բառով եւ ուրիշ ոչ ինչ, այսինքն յետագաս ո՛ եւ է նշան կամ մասերկ չ'ընդունիր: Այսպիսով բային ըղծական-հրամայական իմաստ մը կու տայ. օր. ինչ խի՛մ, ինչ —տէին, ինչ —տէն եւն:

5. Ապաւնի:

381. Բարբառիս մէջ ապաւնին կը կազմուի ոչ ոքի բառով կամ ոչ մասնկով որ ոչ ոքի-

ին կրճատեալն է: Այս երկու մասերկներն կ'աւելցուին սահմանական ներկային եւ անկատարին վրայ եւ երկու տեսակ ապաւնիներն կը յօրինին: 382. Սակայն այդ ոչ ոքի եւ ոչ չեստեալ կերպերով կը գործածուին

1. Պէտի կրնայ նախագաս կամ յետագաս ըլլալ բային եւ մինչեւ գործածուիլ. օր. ոչ ոքի էմ կամ էմ ոչ ոքի:

2. Պէտի կրնայ գործածուիլ ոչ ինչ չեստ միասին, որն իրմէ նախագաս կամ յետագաս կրնայ ըլլալ. օր. ոչ ոքի գամ ոչ, կամ ոչ գամ ոչ ոքի:

3. Պէ կրնայ առանձին գործածուիլ յետագաս կամ նախագաս. օր. էմ ոչ կամ ոչ էմ:

4. Պէ կրնայ կրկնուիլ, այսինքն միաժամանակ յետագաս եւ նախագաս ըլլալ օր. ոչ գամ ոչ:

5. Նախագաս ոչն կրնայ կրճատուիլ ձայնաւորով սկող բայերու առաջ եւ գործածուիլ թէ՛ ոչ եւ թէ՛ ոչն յետագասներուն չեստ. օր. ո՛ բթամ ոչ կամ ո՛ բթամ ոչ ոքի:

383. Հետեւեալ ցանկով պարզ կը տեսնուի ոչ ոքի եւ ոչ ի գործածութիւնը:

Պէտի — օր. պիտի խմիմ, պիտի կարգայի: — ոչ ոքի: օր. խմիմ՝ պիտի, կարգայի՝ պիտի:

Պէտի — ոչ: օր. պիտի խմիմ տի, պիտի կարգայի տի:

ոչ — օր. տի խմիմ, տի կարգայի:

— ոչ: օր. խմիմ տի, կարգայի տի:

ոչ — ոչ: օր. տի խմիմ տի, տի կարգայի տի:

ոչ — ոչ ոքի: օր. տի խմիմ՝ պիտի, տի կարգայի՝ պիտի:

ո՛ — ոչ: օր. տ'եթամ տի, տ'ուտէի տի

ո՛ — ոչ ոքի: օր. տ'եթամ՝ պիտի, տ'ուտէի՝ պիտի:

(Շարունակելի):

ՄԵԼԻՍ Ս. ԴԱՆԻՍ-ՈՒԷԿ



ԸՆԴԳԻՄԱՆՍՈՒԹԻՒՆ

ՄԻ ԴՈՓՆԵՆ զՍԵ Գ. Կ. ԲՈՄԲՈՆԵՆԻ ԺՈՂՈՅԵՐ

Երբ մարդ երկար ժամանակ իւր «իմաստութեան» երազով օրօրուած, յանկարծ խոչընդոտի կը հանդիպի եւ՝ իւր քաղցր ցնորքից

Հիսաթափաւած՝ իւր մոլորութիւնը կը տեսնէ, նորան ձեռում է միայն լուռութեամբ օգտուել զէպ-քից եւ իւր սխալները ուղղել. սակայն շատերի մէջ մեծամտութիւնն այն աստիճան արդէն ար-մատացած է, որ նորք, փոխակից այս խելջօք եւ պատուաւոր ճանապարհն ընտրելու, ձգնում են իրանց մոլորութիւնները անազնու գէնքով պաշ-տպանելու: Այս պիտը մանաւանդ տարածւած է գիտական ապարիզում, մեզանում եւս ծնելով մի շարք այլանդակ երեւոյթներ եւ... բազմաթիւ տճաս "մանաբգէտեր":

Պ. Բասմաջեան, չեքտուելով այն գասից, որ նա ստացաւ "Հանդիսի" 9. Համարում, յուսահատ ջանքեր է անում իւր տգիտութեան խաւարի միջից դուրս գալու: Արդարացընելու համար "վարկաբան" անունն, որ նա իրուամբ վատակած է մեր առաջուր թերթերից, պարտնը կը զանայ ծածկել իւր մտաւոր եւ բարոյա-կան անանկութիւնն ընտիր հայՏոյանաց հեղե-քատի տակ. սակայն այս պատիւը նորան կը թող-նենք, քանի որ իւր մարգարիտներով նա իւր ճակատն է զարդարել, թիզ թէ ժողովրդական առածը կ'ըսէ. "գետին ընկածին չեն հարւածէ.":¹ այլ միանգամ եւս նորա տգեղ մերկութիւնը ցոյց տալու ձանձօղթը վրաներս կ'առնենք:

Պ. Բասմաջեան մանաւանդ վշտացած է, որ իրան պէս հռչակաւոր մշակին ազգը դեռ չէ ձանաչել եւ գնահատել. "Երեք տարի շարու-նակ "Բանասեր" կատարեց այն գործը... ինչ որ "Հանդէսը", չէրցաւ անել" (!): չտեսնած հան-ձար... այս հիւանդութեամբ վարակած պարոնը առանց ամաչելու կը լեցընէ "Բանասերի" էջե-րը եւ թղթակագրք իւր փայլուն անձին ջատա-գոփութեամբ. ինքնաբննդատութեան ազնիւ միջոց... սակայն, չջատանալով սորանով եւս, նա քրոնր գիմու մներ է արած ինձ, իւր անունն ջանալ Գերմանիայում անմահացընելու:

Վնեելով միամիտ ու իրրեւ արշունի, բարե-սիրտ պարոնը ինձ է պարգեւել իւր գիտութեան գանձարանի մի մասը. իմ "Իրանի Հերոսներն" էլ եւ այլն Ն է գրել (!). անկասկած մեզանում լըյս տեսնող քրտնաջան ուսումնասիրութիւնները բոլորն էլ նախ Նոր ձարտար գրքն տակից են հոգի եւ շունչ անունում. Աբժրուհեայ նախարա-րութեան գիտն էլ Նորան է. այս երազից պարոնին՝ շնորհակալ կարագետ... Հիսաթափեցընելու եւ նորա խորգտի վար-

մուշը մերկացընելու համար յառաջ կը բերեմ այն յարգելի ուսուցչապետաց վկայութիւնն, որոնց բարեկամութիւնն մի քանի տարի է կը վայելեմ. պրոֆ. Delitzsch եւ Winckler, իմանա-լով բանի հուճիւնը, խնդրած են ինձ յայտնել, որ "Ապաշխարան, խոստովանեաց, Արաձաու-նեաց եւ այլ մեր նախարարութեանց, որպէս եւ մի քանի հայաշխարհագրական անւանց վերայ եւ նոցա ուշագրութիւնն դարձրած եմ դեռ 1900 թ., համեմատելով նոցա ատուր-կան եւ ուրարտեան նշանագրերու հանդէս եկող համահնչուն անւանց հետ,": Պ. Գր. Մե-սերշմիդտ բարեհաճել է յանուն ճշմարտու-թեան հետեւեալ քրոնր վկայութիւնն տալ, որ առաջ եմ բերում հայերէն թարգմանու-թեամբ. "Պ. Գր. խալիթեանց ինձ, իբրեւ Առաջաւոր Ասիոյ Ընկերութեան քարտուղարն 1902 թ. Մարտ ամի միջին թւերում յայտ-նելով, որ նա "հայ նախարարութեանց ծագ-ման մասին, գաստիտութիւն է կարգաւոր, այս ղէպքում ինձ հարորդեց, որ նա — ունի վեր-ջաւորութիւնն կրող նախարարութեանց անուն-ները նախահայկական քնակչներէց կը սերէ: Ար-չափ դեռ յիշել կարող եմ, նա աւեց միեւնոյն ժամանակ այլ անւանց հետ եւս Արժուրէի, Ապահունի եւ այլն անունները: Գր. Մե-սերշմիդտ, քարտուղար Առաջաւոր Ասիոյ Ընկերութեան Բերլին":¹

Այսչափս եւ բաւական կը համարեմ:

Իւր հերքումներում պ. Բասմաջեան մի քանի կէտերի մասին (իկնք եւս մոլորութիւն հա-մարելով) միանգամայն լուծ է. օրին. ուրար-տեան — ինչէլ եւ մեր — եւս մասնիկների աչ-գակցութեան (?), իւրք ազգի (?). անւան եւ այլն վերաբերմամբ. միւս նկատողութիւններն զուրկ են օրեւէ արժանաւորութիւնից. թէ ի՞նչոք (թնիիր) բառը իրանեան չէ (որ միայն մի անգամ կը յիշի Աբգայունի եւ Աւեստա-յում²), ինչդրիս նկատմամբ համակարծիք են ոչ միայն սեմագետներ, այլ եւ այնպիսի յայտ-նի հնդկ-իրանագէտներ, ինչպէս Geldner, Andreas եւ այլք:³ — Աւարտեան ու ձայնաւորի արտասանութեան մասին կարծիքները միանգա-մայն տարբեր են. կարող էր օ, hu եւս v (եր-կու ձայնաւորների մէջ) հնչել: Բասմաջեանի

¹ Զարմանաք չէ, որ պ. Բասմաջեան ջատագովել է "Մշակի" 151րդ համարում իմ դէմ լըյս տեսած արձողի թղթակցութիւնը:

¹ Բնագրեր գտանուում է "Հանդիսի" խմբագրու-տեամբ:

² Ձեռ չիւրմանի քերականութիւնը:

³ Ձեռ եւս H. Winckler: Kritische Schriften, B. II, S. 57.

“մանագրտութիւնը, ի միմիջարութիւն կը ձայն
իրան համար:

Եբրանիւնէ եւ Սեւեանի համեմատու-
թիւններս, որոնց դէմ պ. Բասմաջեան ոչ մի
ողոյցոյց բերած չէ, բայց իւր հաճոյքից, ան-
խախտ կը պահպանեն իրանց զարմութիւնը:

Ինչպէ՛ն է Բարանի զատ հեռու են մի-
մեանցից, մինչդեռ Ռուսերու ձեւը (հմմտ. Ruša)
կը յիշէ դեռ Ագաթանգեղոս¹: Պարոնի յայտնի
չէ, կ'երեւի որ Մուշի եւ Սասունի մէջ մինչեւ
այժմ «Ռչտունիք» անուն կը կրէ մի հայաստու
քուրդ ցեղ. թէ՛ղ թէ ժողովրդական «վաշեկ»
անուն վանայ վիայետու՞մ դեռ կ'ապրի:

Բայց դա միակ սխալը չէ և. Բասմաջեանի
“Հայ նախարարութեանց ցանկում,” որ նա
վտահայտութիւն ունի, գրուածութեան սահմանը
անցած, գրեթէ ծայրէ ի ծայր բեւեռագիր ար-
ձանագրութիւններու անւանց հետ համեմատե-
լու, լինին սօքա արտաքին նմանութիւնից ան-
գամ զտրվ. գործը ինքն ըստ ինքեան գեղեցիկ
է (թէպէտեւ ոչ Բասմաջեանով սխաւած), բայց
չափը ճանաչելն եւս վնաս չունի, եթէ այսպէս
քաջութեամբ առաջ գնանք մեր “համեմա-
տութիւններում”, շուտով կ'ունենանք մի շարք
չնեական, Սոմալի - Զուլու - Հոտտենտոեան
“գաղթած ցեղեր” մեր նախարարութեանց ցու-
ցակում. այսպիսի անօգուտ բարոտաղերբով լի
է պ. Բասմաջեանի “ցանկը.” որոնակ

- 75. Գառեանք, Գառնիւնի
- 123. Ծոփացիք, շուգո
- 127. Կաղարջք, Ինչուշի
- 136. Կղուղեանք = Կուլուայ
- 140. Կողբացի = Կուլբուշի
- 188. Յուրիպեանք, Յուրիպեանք, Ռու-
բիլու
- 201. Ռուուանցիք, Ռուբու
- 208. Սայահունիք, շուլուհուն
- 209. Սահունիք, Ռուրուու եւ այլն եւ այլն.
- 205. Ռափսեանք հմմտ. Բուպի - Ինիլի

արդէն կոչու սխալ է, այն եւս ընկերցան մէջ,
որ սպասեալ չէր մի “մանագրտից” (ինչպէս
նա ինքն իրան կը մեծարէ). պատմութիւնը չգիտէ
Սարգսրի Ռապիշ խնիշ (որպի Ռապիշի), այլ
Սարգսրի Արգիշտի խնիշ. այս նոր գիտը
կը ձայն պարոնի բաժինը յայցացոյց Նորա առա-
ջադիմութեան: Ինքն Sayce արդէն 1893 թ.
ուղղեց իւր սխալը ըստ լուսանկարի, որ նորան
ուղարկած էր Morgan եւ կարդաջ՝ Ar-ra-gis-te

¹ Ագաթանգեղոս, վ. Ե. 1885, էջ 593.

փոխանակ Rapis,¹ իսկ սպա ‘սիկուլիյ’ Ar-
gis-te, Կերեւի Բասմաջեան ծանօթ է վանեան
արձանագրութեանց հետ Ալյոսի ընթերցումնե-
րէն, եւ այն եւս՝ հին ընթերցումներէն:

15. Ամատունիք = (Էրաներ) Ամարանի
հարցական է. ասորական արձանագրութիւ-
ններ կը յիշեն այլ երկու համահնչուն անուն-
ներ եւս՝ ա. (երկիր) A-ma-at-tu (Ատորիքում)
եւ բ. (երկիր) A-ma-da (Մեդագիք, Ատորնա-
սիրպալ), վերջինս աւելի հասանական կը թուի
համեմատութեան համար:

Թէ այս բազմութիւ խառնիճաղանճ աղ-
գերը “համացել եւ համայնգու էին” (Բանա-
սեր, էջ 195), այդ մտւթ ինչիւրը միանգամից
կը պարզէ պարոնի սքանչելի բնաղբում, որ
այսպիսի դէպքերում բնու «վարանել» չգիտէ:

Պ. Բասմաջեան ասոր է ուրիշներին եւս
իւր չափով չափել. “սուրդիս” ԾԻՐ համարում
իրբեւ նմոյշ առաջ բերելով մի քանի “ասու-
րերէնից անմիջապէս փոխ առնւած բառեր”, կցած
էի նոցա եւ այնպիսիները, որոնք Հիւրշմանի քե-
րականութեան մէջ չկան. որին. ազարակ, թըրու-
լուն, իմար, ասորերէն կարգալ սովորելը շատ
օգտաւէտ կը լինէր քաջ քննադատին:

Պ. Բասմաջեանի ամենամեծ մտրութիւն-
ներէից մէկն է պնդել, թէ “Հայերը միայն ասու-
րերէնի միջոցով են ասորական բառեր փոխ
առել”, ներկայ ցուցակս ցոյց կը տայ, թէ որ-
չափ սխալ է այդ կարծիքը:

Հայ-ասորական:

- 1. կնիք — kunukku
- 2. նահանգ — nagû, սուսեր. na-an-gu
- 3. դիւշարկանել — rakasu, II (Schanzen
aufwerfen“)
- 4. կմահու ք — kimahû (գաղաղի)
- 5. մաքառել — mahâru
- 6. գաղաթ — kakkadu (קקדו)

գուցէ համեմատելու է եւս՝

- 7. հիմն — temenu
- 8. իշխան — šaknu
- 9. Մահազ-ուրի — mahâzu (քաղաք), bel m-
hazu = քաղաքացի
հմմտ. מורץ

¹ Journal of the royal asiatic Society 1893, p. 32.
² Հիւրշմանի քերականութիւնը կը յիշէ միայն Ինի
եւ Բուիք բառերը:

Հայ-արաբական-ստուգանք:

- 1. անօթ — unātu, ʾnāt արամ. ʾnāt
- 2. հոր — hurru, ʾhr
- 3. խորշ — huršu, ʾhrš
- 4. թանիր — tinūru, ʾtīnūr
- 5. արգաման՝ argamannu } Ժիրանի
argamān
- 6. պատուել patāru, ʾpāt
- 7. ուն — rešu, ʾrēš (Համա. ԽճՂ, ʾrēš)
- 8. ա-ճապարել šapāru
գուցե համեմատելու է եւս՝
- 9. ա-ուսքել raku, ʾrāk (hif.)
- 10. ագարակ-ի ikkaru, ʾikkār (agricola).

Չնայելով իւր բոլոր թափած զանքին պ. թամանյան այնպէս էլ չապացուցեց իւր «խմստու թիւնն», որ «Արամէն ու բարտեան առջին հարստութեան վերջին թագաւորն էր, որ Սաղմանասար Բ. էն (800—825) շարաշար կերպով յաղթուեցաւ եւ վերջ գտաւ առջին հարստութիւնը, որին յաջորդեց երկրորդ հարստութիւնը Սարգուր Ա. ուլ՝ (Բանասերէջ 173). իսկ ապա, իրրեւ ապացոյց յիշելով իւր «Արձագանքին», ուղղած թղթակցութիւնը, թէ «... Ուրարտիի տերութեան թուականը պէտք է իններորդ դարէն յետս մղել տանել մինչեւ յերկոտասաներորդ դարն... քանի որ Տիգրան-Պրիւնսարի մը դէմ դնելու չափ զօրութիւն ունեցող տերութիւն մը չի կրնար նոր կազմուած ազգ մ՝ ԸԼԽՂ» (էջ 280) սոյն սողնքով յարգելի պարոնը ինքն իրան ապտակել է. պարզ է, որ այս Յ դարում կարող էին մի անգամ հարստութիւններ միմեանց հետեւել:

Եւ այսպիսի մի սխալ թելլ է տալիս մի «գիտական» թերթը՝

Վամենայով գիտութեամբ պարապել, պ. Բամանյան մինչեւ այժմ չի գիտի Երեւան-Իջևան, լով կարծիքը փոփոխ տարբերել (ինքն էլ իրան «խմստու» կը կարծէ...), մինչեւ որ չի արատի այն խաւարը, որ կը տիրէ Արամէից մինչեւ Սարգուր Ա., միանգամայն ինքնահամոզ վստահու-

1 Մ. իորենացիի բնագիտական անուն տեղ է ընդունել. «տեղայն Սաթիւնի տիկին... զոյգ խաւարի է բարձրէն Արտասար», Ա. ԿԼ. Լ. այս սխալ իմաստով թարգմանած է եւ Մ. Էմի:

Թիւն է Արամէին՝ առաջին հարստութեան վերջին թագաւոր, ճանաչել¹:

Վերեւայ, պարոն, մանասերտի՝ պատմական հայեացքն բուական բուժ է, որ ինքն իրան կը հակասէ. անբաւարար է նմանակէս նորս պաշտօն սեմական եւ ուրարտեան լեզուներում. լաւ կ'անէր պ. Բամանյան իւր այդ խոշոր պակասը լրացնէր, նախ քան Երեւան «դաս» տալը:

Մի անկեղծ խորհուրդ եւս.
Եթէ «խմստուն», պարոնը, ամօթը մի կողմ՝ գրած, շարունակելու է «Բանասերտի», էջերը իւր գլխի գովասանքներով լցնելու, փաստեր խարդախելով եւ ուրիշներէ վերայ հայ-հայանքներ տեղադրով, լաւ կ'անէր շտապէր անմիջապէս գաղարեցնել իւր «գիտական» թերթիկը, որով մեծ ծառայութիւն արած կը լինէր հայ մամուլին
Բ. ՆԱԼԱԹԵՍՅԵ



Մ Ա Ց Ե Ն Ա Ռ Յ Ս Ա Կ Ա Ն

«ԼԵՈՒՄ ԳՆՈՐ. ՀԵՂ. ՈՐՏՈՒՄ ՍԵՐՈՒԹԻՒՆՆԵՆ Տագարութիւն Սարգան Ե ԼԵՂ. Կ. Պոլս 1902, զին 5 դրու:

Աս նոր գրքին պարունակութեան վրայ քիչ բան ունիմ ըսելու, այնքան քիչ՝ որ կը շուարիմ ամբողջ յոգուած մը բերան բերնի բերելու:

Յիտմուհիս ստանաւոր հատուածներէ բաղկացած մաստնիկ մը, որոնց վեցը ոտանաւոր չեն (էջ 8, 12, 24, 38, 45 եւ 78), եւ մնացածներն ալ հազիւ կրնան անուանուիլ ըստ Նաստեղծութիւն: Վերեւայ թէ ծով նետուած է տգեղին... «Ախշուր» որ կը պակսի:

Շատ սիրեցի սակայն Կամենայրիւրը (էջ 15), եւ Մոմը (էջ 80) որոնք մանաւոր յատկանիչ մը ունին, հաճելի եւ ազգեցիկ են ընթերցանութեան, ու եթէ ամբողջ գրքովը միմիայն աս երկու բանատեղծութիւններն բաղկացած ԸԼԽՂ, դարձեալ ընթանալէ պիտի յանձնարարէի որ իւրաքանչիւր ոք պարտականութիւն սեպէր

1 Հնուց որ սպիտակ թագաւորն է մեզ յայտնի. տգիտութեան շնորհ է այս իմաստով ըմբռնել այն առգիւր, որտեղ կ'ըսեն «Արամ» Ուրարտուի առաջին (ինչ կը յայտնի) թագաւորը... Երեւ զգայունըզով զնման պարտեղ պիտի չէ սրբապատ անուշադիր անխոստ առաջուկը birtu (կապ) փոխանակ birta (բերք), որ գերմաներէն ընաչորմն տեղի չունի: